ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից առ 1-ը հունիսի 2021 թվականի կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող 38.33հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություններ՝ ցածրարժեքից - բարձրարժեքի՝ Արենի համայնքում 37.5 հա / արոտը և այլ հողատեսքը / փոխադրվել և անցել են բազմամյա տնկարքների տակ, իսկ Եղեգնաձորի համայնքում 0.8հա արոտը փոխադրվել է վարելահողի՝ հետագայում պտղատու այգի հիմնելու նպատակով:

Նշված փոփոխությունները կարծածվեն մարզի 2021 թվականի ամփոփ հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակվում է:

Որոշման կարգի համաձայն կատարել ենք նաև բարձրարժեքից – ցածրարժեք հողատեսքերի փոփոխություններ՝ Գլաձոր համայնքի Գլաձորի բնակավայրի քաղաքացու սեփականություն հանդիսացող 0.123հա և 0.044հա պտղատու այգիները և Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող 2.61306հա և 3.58007հա պտղատու այգիները փոխադրվել են ցածրարժեք հողատեսքերի՝ վարելահողերի:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ենք ներկայացրել, համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում, հողերի նպատակային նշանակության փոփոխության 12 առաջարկություններ, որից 7-ին հանձնաժողովը տվել է դրական

եզրակացություն, որն էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքներ, մնացած 5-ը ընթացքի մեջ են:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգում ենք իրականացրել մարզի Զառիթափի համայնքում, հայտնաբերված թերությունների վերացման համար՝ արոտների օգտագործման տրադրումը կատարել իրավական ակտերի պահանջներին համապատասխան, որի վերաբերյալ հստակ ժամկետ է տրվել:

ՈՒսումնասիրվել և օրինակություններն են ստուգվել հողային հարաբերությունների բնագավառում համայնքների կողմից ընդունված համայնքի ղեկավարի և ավագանու որոշումները:

Համաձայն ՀՀ կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համաձայնեցմանն ենք ներկայացրել Գլաձոր, Արենի և Ջերմուկ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական և արդյունաբերական նշանակության հողերի օտարման առաջարկությունները, որոնք ընթացքի մեջ են:

ՈՒսումնասիրվել և օրենքով սահմանված կարգով օժանդակություն է ցուցաբերվել համայնքների կողմից բարձրացված հիմնախնդիրների լուծմանը: Մասնագիտական և մեթոդական օժանդակություն է ցուցաբերվել համայնքներում հողերի իրավական, որակական, քանակական փոփոխություններին, որն էլ կնպաստի հողային հաշվեկշռի կազմանը:

Հետևողական ենք եղել համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալության տրամադրման աշխատանքները իրականացվեն ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից առ 1-ը հունիսի 2021թ օտարվել է 63.198հա, 53.5 միլ. դրամ գումարով, վարձակալական հիմունքներով

օգտագործման է տրամադրվել 6.3 հա, որի համար կնքվել են 13 վարձակալական պայմանագրեր:

Բաժինը ստացել է 6 քաղաքացիներից դիմումներ, բոլոր դիմումներին օրենքով սահմանված կարգով ընթացք ենք տվել:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական

տեսչության պետ Մ. Մեսրոպյան

02.07.2021